**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4-3**

ք.Երևան «21» «07» 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կամո Ամիրխանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԴԻՆԳ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Խրաչիկ Սահակյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 07.06.2023թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4-3 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ***Համաձայնագրի առարկան***

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 06.07.2023թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն և լրացումներ, ՀՀ կառավարության 2022թ.-ի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1107-Ն որոշումը, կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N3 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.2 Պայմանագրի 1.3 կետի առաջին պարբերությունը հաստատել նոր խմբագրությամբ՝ «1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ»:

1.3 Պայմանագրի N2 հավելվածի՝ «օրացուցային գրաֆիկ»-ի, աշխատանքների կատարման ժամկետը սյունակի այն տողերը որոնցում նշված է «180 օր» փոխարինել հետևյալ արտահայտությամբ՝ «մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ»:

1.4 Քանի որ Կապալառու կազմակերպությունը հրաժարվում է Պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված կանխավճարից, ուստի նշված կետը դադարում է գործել:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4-3 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված է 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «ԷԴԻՆԳ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ք. Վանաձոր, Վարդանանց 4 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011039790 | Հ/Հ 1660005983250100 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 06954328 |
| ՔԿ ծառայության գլխավոր քարտուղարի ՊԿ<br>Կ. Ամիրխանյան | Տնօրեն՝<br>Հ.Սահակյան |
| -------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | -------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

*Հավելված N 1*
*«21» «07» 2023 թ. կնքված N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4-3 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 4 | 45611300/504 | ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի արտաքին ջրահեռացման ցանցերի վերանորոգման շինարարական աշխատանքներ | - | - | 12.700.000 | 31.998.480 | 31.998.480 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039790
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղար Պ/Կ
Կ. Ամիրխանյան

____________________
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ**
«ԷԴԻՆԳ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Վարդանանց 4
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660005983250100
ՀՎՀՀ 06954328

Տնօրեն՝
Հ.Սահակյան

____________________
/ստորագրություն/
Կ.Տ